Պատմության օլիմպիադայի հանրապետական փուլ (2023-2024 ուստարի)

11-րդ դասարան (տևողությունը՝ 180 րոպե)

ա) Հայոց պատմություն *(20 միավոր)*

1. Ամենայն Հայոց կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին ե՞րբ է էջմիածնում գումարել Հայաստանի ազատագրության հարցին նվիրված գաղտնի ժողով.
   ա/ 1677 թ. բ/ 1678 թ. գ/ 1679 թ. դ/ 1680 թ. 0,5 մ.
2. Ո՞վ է հայ մելիքներից Նադիր շահի օրոք նշանակվել Խամսայի մելիքությունների կառավարիչ. 0,5 մ.
   ա/ Հակոբջանը բ/ Շահնազարը գ/ Եգանը դ/ Մանուչարը
3. Որտե՞ղ է ծնվել Հովսեփ Էմինը. 0,5 մ.
   ա/ Կալկաթայում բ/ Համադանում գ/ Մադրասում դ/ Նոր Ջուղայում
4. Անգեղակոթի ժողովի որոշման համաձայն՝ ո՞վ է ուղեկցող կարգվել Իսրայել Օրուն. 0,5 մ.
   ա/ Մելիք Հակոբջանը գ/ Գրիգոր վարդապետ Մանուչարյանը
   բ/ Մելիք Սաֆրազը դ/ Մինաս վարդապետ Տիգրանյանը
5. Ե՞րբ է տեղի ունեցել Օշականի ճակատամարտը. 0,5 մ.
   ա) 1827 թ. օգոստոսի 17–ին գ) 1827 թ. հոկտեմբերի 1–ին
   բ) 1827 թ. սեպտեմբերի 30–ին դ) 1827 թ. հոկտեմբերի 13–ին
6. Որքա՞ն էր 1893 թ. տվյալներով Կարինի բնակչության մոտավոր թվաքանակը. 0,5 մ.
   ա/ 40 հազար բ/ 50 հազար գ/ 55 հազար դ/ 60 հազար
7. Խաչատուր Կեսարացու ջանքերով 1638 թ. հայկական տպարան է ստեղծվում՝ 0,5 մ.
   ա/ Լվովում բ/ Կեսարիայում գ/ Նոր Ջուղայում դ/ Ամստերդամում
8. Ո՞ր քաղաքում էր հրատարակվում «Արմենիա» թերթը. 0,5 մ.
   ա/ Փարիզ բ/ Մարսել գ/ Ժնև դ/ Մոսկվա
9. Ե՞րբ է կնքվել Փարիզի հաշտության պայմանագիրը. 0,5 մ.
   ա) 1855 թ. հունվարին գ) 1856 թ. նոյեմբերին
   բ) 1855 թ. մայիսին դ) 1856 թ. մարտին
10. Ե՞րբ է կնքվել Ադրիանապոլսի ռուս-թուրքական հաշտության պայմանագիրը (նշե՛ք տարեթիվը, ամիսը, ամսաթիվը): 0,5 մ.
11. Ո՞ր քաղաքում է 1891 թ. հիմնադրվել «Խարիսխ» զինագործական արհեստանոցը: 0,5 մ.
12. Ո՞վ էր Հովսեփ Էմինի հետ համագործակցող վրաց թագավորը: 0,5 մ.

13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)

ա) Հայ հեղափոխական դաշնակցություն (ՀՅԴ) կուսակցության առաջին ընդհանուր ժողովի գումարումը

բ) Հնչակյան կուսակցության ծրագրի հրատարակումը

գ) Գրիգոր Արծրունու գլխավորությամբ գաղտնի խմբակի ստեղծումը Թիֆլիսում

դ) Խանասորի արշավանքը

ե) Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության ստեղծումը

զ) Մայիսյան բարենորոգումների ծրագրի հանձնումը օսմանյան սուլթանին

է) Աղբյուր Սերոբի սպանությունը Սասունի Գելիեգուզան գյուղում

ը) Հնչակյան կուսակցության պառակտումը

թ) Սարգիս Կուկունյանի զինված ջոկատի կողմից ռուս-թուրքական սահմանն անցնելը

1	2	3	4	5	6	7	8	9

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)

1. Արիստակես Լաստիվերցի 2. Հովհաննես Դրասխանակերտցի 3. Կիրակոս Գանձակեցի
4. Վարդան Արևելցի 5. Մատթեոս Ուռհայեցի 6. Սամվել Անեցի

ա. Հայկի ու Բելի ավանդությունից մինչև 924 թ. բ. 1000-1071 թթ. գ. 952-1136 թթ.

դ. Անսկիզբ ժամանակներից մինչև 1267 թ. ե. Արարչագործությունից մինչև 1180թ.

զ. Քրիստոնեության ընդունումից մինչև 1265 թ.

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ Հովհաննես Թութունջին 1666 թ. ժամանել է Փարիզ և հավաստիացրել ֆրանսիական արքունիքին, որ հայերը հույների հետ միասին պատրաստ են ապստամբել Օսմանյան կայսրության դեմ:

բ/ Մահտեսի Շահմուրադը ճանապարհորդել է Եթովպիա՝ այդ երկիրը ևս հակաթուրքական պայքարի մեջ ընդգրկելու նպատակով:

գ/ Ամենայն Հայոց կաթողիկոս Հակոբ Դ Ջուղայեցին 1678 թ. վերջերին Էջմիածնում գումարում է գաղտնի ժողով, որտեղ քննարկվում է Հայաստանի ազատագրության հարցը:

դ/ Հակոբ Դ Ջուղայեցու հրավիրած գաղտնի ժողովին մասնակցում էին հոգևոր և աշխարհիկ 12 գործիչներ:

ե/ 1699 թ. Սյունիքի մելիքների աջակցությամբ Անգեղակոթ գյուղում հրավիրվում է գաղտնի խորհրդակցություն:

զ/ Անգեղակոթի գաղտնի խորհրդակցությունում Իսրայել Օրուն խորհուրդ են տալիս դադարեցնել բանակցությունները եվրոպական երկրների հետ և բանակցություններ սկսել ռուսական պետության հետ:

է/ 1711 թ. Աստրախանում Իսրայել Օրին մահացավ, իսկ Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը շարունակեց ուղևորությունը դեպի Ռուսաստան:

ը/ 1724 թ. հունիսին թուրքական բանակը գրավել է Թիֆլիսը և շարժվել դեպի Գանձակ, իսկ վրաց թագավոր Հերակլ 6-րդը հեռացել է Ռուսաստան:

թ/ 1724 թ. հունիսի 12-ին կնքված պայմանագրով Թուրքիան ճանաչել է Մերձկասպյան շրջանների միացումը Ռուսաստանին, իսկ ռուսական կողմը՝ Թուրքիայի տնօրինությանը թողել Շամախիից արևմուտք ընկած երկրամասերը:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)

ա/ 14-րդ դարի վերջերից Աղվանից եկեղեցու կաթողիկոսանիստ կենտրոն դարձավ Գանձասարի վանքը, ինչի պատճառով կաթողիկոսությունը անվանել են նաև Գանձասարի կաթողիկոսություն:

բ/ Ուշ միջնադարում հայ կալվածատերերի զգալի մասը սեփական կալվածքները փրկելու նպատակով կամովին հանձնել են եկեղեցուն, իսկ իրենք էլ, ընդունելով հոգևոր կոչումներ, շարունակել են տիրել այդ կալվածքներին. այդպիսիներին անվանել են տեր-տեր:

գ/ 19-րդ դարի կեսերին Կ. Պոլսում շարունակում էր գործել արևմտահայերի հոգևոր կենտրոնը՝ պատրիարքարանը:

դ/ Պոլսահայ համայնքի գործերի կազմակերպմանը մասնակցում էր 1844 թ. ստեղծված Ազգային ժողովը, որի անդամներն ընտրվում էին ամբողջ ազգի կողմից:

ե/ Կիլիկյան Հայաստանի գործակալությունների մեջ ազդեցիկ դեր ուներ արքունի քարտուղարությունը, որի գլխավոր պաշտոնյան կոչվում էր կանցլեր, ով ղեկավարում էր բանակցություններն օտար երկրների ներկայացուցիչների հետ և տնօրինում արքունի եկամուտներն ու ծախսերը:

զ/ Կիլիկիայի հայոց բանակի սպառազինությամբ և պարենի մատակարարմամբ զբաղվում էր սպասալարությունը, որի ղեկավարը սպսրապետի անմիջական տեղակալն էր:

է/ Կիլիկյան Հայաստանում շրջանառության մեջ էին նաև բյուզանդական օրենքները՝ ասիզները:

ը/ Կոստանդնուպոլսում 16-րդ դարում ձևավորվում է գերազանցապես արտաքին առևտրով զբաղվող մեծահարուստ հայ չելեբիների դասը. նրանք ընդգրկված էին իրենց շահերը պաշտպանող առանձին կազմակերպությունների՝ էսնաֆությունների մեջ:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ 19-րդ դարի 50-70-ական թթ. հասարակական-քաղաքական գոյություն ունեցող բազմապիսի ուղղությունների մեջ հայկական միջավայրում ավելի հստակորեն զանազանվեցին պահպանողական և ազատական (լիբերալ) հոսանքները:

բ/ Հայ ազատականության նշանավոր դեմքերից մեկը՝ Ստեփանոս Նազարյանցը, գտնում էր, որ ազգի խնդիրների լուծման համար կարևորագույն նշանակություն ունի քաղաքական ինքնորոշման պահանջների առաջադրումը:

գ/ Պոլսահայ ազատականների շարքում առանձնանում էին երգիծական ժանրի երկու խոշոր դեմքեր՝ «Մեղու» հանդեսի խմբագիր Հարություն Սվաճյանը և գրող, հրապարակոս Հակոբ Պարոնյանը:
դ/ Հայ քաղաքական մտքի ազգային հեղափոխական-ժողովրդավարական ուղղության հիմնադիրը Միքայել Նալբանդյանն էր, ով հանդես էր գալիս հայ ազգային արժեքները եվրոպական արժեքային համակարգին համահունչ դարձնելու և զարգացնելու գաղափարներով:
ե/ 1891 թ. սկզբին կնքված համաձայնագրով Արմենական կուսակցությունը միանում էր ՀՅԴ–ին:
զ/ 1863 թ. մայիսի 17-ին Կ.Պոլսի Ազգային ընդհանուր ժողովը հաստատում է ազգային սահմանադրությունը:
է/ Մկրտիչ Խրիմյանի շնորհիվ, ով 1869 թ. դարձել էր Կ.Պոլսի հայոց պատրիարք, ազգային սահմանադրությունը գործադրվել է Արևմտյան Հայաստանի բազմաթիվ գավառներում:
ը/ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը 1895 թ. մայիսի 11-ին սուլթանին հանձնել են մի նախագիծ, որը ստացել է Մայիսյան բարենորոգումների ծրագիր անունը:
թ/ Մայիսյան բարենորոգումների ծրագրի համաձայն՝ հայկական վեց նահանգներում սուլթանի կողմից նահանգապետեր պիտի հաստատվեին միայն տեղական բնակչության համար ցանկալի մարդիկ՝ առանց ազգային ու կրոնական խտրականության:

1	2	3

18. Գտե՛ք, նշե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (2 X 0,5 մ.)
1912 թ. հոկտեմբերին Թիֆլիսում ձևավորվեց (համազգային նոր կազմակերպություն՝ Հայոց ազգային կենտրոնական խորհուրդ (կարճ՝ Հայոց ազգային խորհուրդ):

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)
«Բարձրյալն Աստված թող ... Ձեր սրտի մեջ ներշնչի հավատի զգացումները՝ ազատելու համար բոլոր քրիստոնյաներին և հատկապես մեր ազգին»:
ա. Ո՞ւմ խոսքերն են մեջբերված:
բ. Ո՞ւմ է ուղղված նամակը, որից կատարված է մեջբերումը:
գ. Ե՞րբ է գրվել այդ նամակը:

20. Լրացրե՛ք տեքստում բաց թողնված հատվածները. 1,5 մ. (3 X 0,5 մ.)
1921 թ. ... ...-ին (1) ...-ում (2) Արշավիր Շիրակյանը իրականացրել է Հայոց ցեղասպանության մեղավորներից Օսմանյան կայսրության ... (3) Սայիդ Հալիմի վրիժառուական մահապատիժը:

21. Տրամաբանական խնդիր. *Եթե Հայկական լեռնաշխարհում հնագիտական պեղումներից գտնված իրը 13200 տարեկան է, քարի դարի կոնկրետ ո՞ր պարբերափուլի (ժամանակաշրջանի) ընթացքում է ստեղծվել:* 1 մ.

22. Աշխատանք Մեծ Հայքի ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)
ա. Ո՞ր աշխարհն (նահանգն) է գունանշված:
բ. Ո՞ր գետի երկայնքով է անցնում նրա հարավային սահմանը:

23. Հայ ազատագրական շարժման ո՞ր նշանավոր գործիչն է պատկերված լուսանկարում. 0,5 մ.

24. Աշխատանք 1909 թ. մայիսի 2-ին տպված ծաղրանկարի հետ (պատասխանե՛ք հարցերին). 1 մ. (2 X 0,5 մ.)
ա. Կենտրոնում նստած անձնավորությունը ո՞վ է:
բ. Հայոց պատմության ո՞ր իրադարձությանն է հաջորդել ծաղրանկարում պատկերված դրվագը:

բ) Համաշխարհային պատմություն *(10 միավոր)*

1. Քաղդեացի ո՞ր ցեղապետն է Ք.ա. 626 թ. թագադրվել որպես Բաբելոնիայի արքա. 0,5 մ.
ա/ Նաբուգոդոնոսոր բ/ Նաբոպալասար գ/ Նաբոնիդ դ/ Սաուսադատար
2. Պարսից ո՞ր արքան է գրավել Ստորին Եգիպտոսը և իրեն հռչակել Եգիպտոսի փարավոն. 0,5 մ.
ա/ Դարեհ I բ/ Կյուրոս II գ/ Քսերքսես I դ/ Կամբիզ
3. Ե՞րբ է Ռեզա խանը հռչակվել Իրանի շահ. 0,5 մ.
ա/ 1921 թ. բ/ 1923 թ. գ/ 1925 թ. դ/ 1828 թ.
4. «Աստվածաբանության հանրագումար» աշխատության հեղինակն էր՝ 0,5 մ.
ա/ Թովմա Աքվինացին գ/ Պետրոս Աբելյարը
բ/ Ռոջեր Բեկոնը դ/ Ֆրանչեսկո Պետրարկան

5. Ինչպե՞ս է որակել Երկրորդ աշխարհամարտի արդյունքների վերաբերյալ Մեծ Բրիտանիայի տեսակետը վարչապետ Ուինսթոն Չերչիլը: 0,5 մ.

6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)

1. Գերմանիայի և Իտալիայի միացյալ ուժերի կողմից Հարավսլավիայի և Հունաստանի նվաճումը
2. Խորհրդա-ֆիննական պատերազմի ավարտը
3. «Բարբարոսա պլանի» հաստատումը Ա.Հիտլերի կողմից
4. Ֆրանսիայի անձնատվության պայմանագրի կնքումը

1	2	3	4

ա. 1940 թ. հունիս բ. 1941 թ. ապրիլ գ. 1940 թ. մարտ դ. 1940 թ. դեկտեմբեր

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ 1941 թ. հունվարի 1-ին 26 երկրների ներկայացուցիչներ Նյու Յորքում ստորագրել են Միավորված ազգերի հռչակագիրը:

բ/ 1935 թ. Գերմանիան գրավել է Սաարի հանքերը, 1936 թ.՝ Հռենոսյան ապառազմականացված գոտին:

գ/ 1940 թ. մայիսին Մեծ Բրիտանիայի վարչապետ է դարձել Ուինսթոն Չերչիլը, որը կարողացավ ամրապնդել երկրի պաշտպանունակությունը:

դ/ «Երրորդ աշխարհ» հասկացությունը քաղաքական շրջանառության մեջ է դրել ՄԱԿ-ի երկրորդ գլխավոր քարտուղար Դագ Համմերշելդը:

ե/ «Նոր աշխարհակարգ» հասկացությունը քաղաքական շրջանառության մեջ է դրել ԱՄՆ-ի նախագահ Ռոնալդ Ռեյգանը:

զ/ 1949 թ. ապրիլին Վաշինգտոնում 12 երկրներ ստորագրել են Հյուսիսատլանտյան դաշինքի (ՆԱՏՕ) ստեղծման պայմանագիրը, իսկ երեք տարի անց դաշինքի անդամ են դարձել Հունաստանը, Թուրքիան և Գերմանիան:

է/ 1949 թ. Արևելյան Եվրոպայի երկրների մեծ մասը տնտեսապես միավորվել է Տնտեսական փոխօգնության խորհուրդ (ՏՓԽ) կոչվող կազմակերպության մեջ:

ը/ 1955 թ. մայիսին Վարշավայում ԽՍՀՄ-ը, Ալբանիան, Բուլղարիան, Լեհաստանը, Հունգարիան, Ռումինիան, Հարավսլավիան և Չեխոսլովակիան ստորագրել են պաշտպանական դաշինքի ստեղծման վերաբերյալ պայմանագիր:

1	2	3

8. Թվարկում և ընտրանք. 2 մ. (4 X 0,5 մ.)

ա. Թվարկե՛ք Նացիստական Գերմանիայի կառավարման համակարգում Ա. Հիտլերի մերձավոր համախոհներից 2-ին:

բ. Ընտրե՛ք 1940 թ. Բրիտանիան նվաճելու գերմանական ձախողումից հետո Արևելյան Եվրոպայում գերմանամետ վարչակարգ հաստատած պետություններից 2-ը. Հունաստան, Թուրքիա, Նիդերլանդներ, Բելառուս, Ուկրաինա, Ռումինիա, Մոլդովա, Բուլղարիա, Հարավային Բուկովինա, Մակեդոնիա, Կոսովո:

9. Աշխատանք ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)

ա. Վաղ արդի ժամանակաշրջանի (ուշ միջնադարի և նոր ժամանակների) ո՞ր պետությունն է պատկերված մուգ գույնով:
բ. Ո՞րերորդ դարում է այն մասնատվել հարևան տերությունների միջև:

10. Ո՞ր դրամատուրգն է պատկերված. 0,5 մ.

11. Աշխատանք պատմական պաստառի հետ. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա. Ո՞ր թվականի իրադարձության է առնչվում պատմական քարոզչական պաստառը:
բ. Ո՞ր պատերազմի մասն էր կազմում ռազմական այս գործողությունը:
գ. Ռազմաքաղաքական ո՞ր դաշինքի օգտին էր այս գործողությունը:

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

06.03.2024 թ.